

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Ա. Մարոյանի վարած աշխատանքային
խորհրդակցությունը Սյունիքի մարզպետարանում
06.08.2014

Օգոստոսի 6-ին Սյունիքի մարզպետարանում տեղի ունեցավ գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքների նախապատրաստման և անցկացման մարզային առաջին նիստը, որին մասնակցում էր ՀՀ ԱՎԾ նախագահ Ստեփան Մնացականյանը : Նիստին ներկա էին մարզի քաղաքային ու գյուղական համայնքների ղեկավարներ, մարզպետարանի, քաղաքապետարանի ու ոստիկանության աշխատակիցներ: Ստեփան Մնացականյանը նախ շնորհակալություն հայտնեց համայնքների ղեկավարներին՝2011թ անցկացված մարդահամարի աշխատանքները բարձր մակարդակով կազմակերպելու համար, ապա անդրադարձավ հոկտեմբերի 11-31-ը Հայաստանում առաջին անգամ անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառմանը: ՀՀ Գործընթացը բավականին բարդ է և պատասխանատու: Այն իրականացնելու համար անհրաժեշտ է համայնքների ղեկավարների անմիջական մասնակցությունն ու հետևողականությունը>>,- ասաց ազգային վիճակագրական ծառայության նախագահը: Նա մանրամասն ներկայացրեց գյուղատնտեսական համատարած հաշվառման նպատակը, կարևորությունը, նախապատրաստական աշխատանքների ընթացքը, խոսեց մարզային հանձնաժողովների ու համայնքների կողմից ցուցաբերվելիք օժանդակության մասին: Սրանք էլ հանդիսանում էին օրակարգի 4 հարցերը: Նախնական տվյալներով մարզում 3 ամիս տևողությամբ պետք է աշխատի 218 հաշվարար՝114 000 դրամ աշխատավարձով (ներառյալ սոցվճարները): 4 ամսով կձևավորվի 6 հաշվառման տեղամաս և հրահանգչական 43 տեղամաս:Հաշվարարների թեկնածուներին գյուղապետերը պետք է նախապես ներկայացնեն ԱՎԾ Սյունիքի մարզային կենտրոն: Համայնքների ղեկավարների խնդիրն է նաև ստուգել փողոցների ու թաղամասերի անվանատախտակների առկայության իրավիճակն ու շենքերի, շինությունների և բնակարանների համարանիշների առկայությունը:Ավելացնենք, որ ծրագիրը ֆինանսավորվում է կառավարության պահուստային ֆոնդից:Աշխատանքային խորհրդակցության վերջում Սյունիքի մարզպետի տեղակալ Աշոտ Մարոյանը շնորհակալություն հայտնեց ՀՀ ԱՎԾ նախագահ Ստեփան Մնացականյանին նախատեսված աշխատանքները հանգամանալից ներկայացնելու և բարձրացրած հարցերին սպառնիչ պատասխաններ տալու համար: